

«Новое Время»-ն Սինոդի որոշումները «ողնու կաշուց պատրաստած ձեռնոցների է նմանեցնում»։ գործը նոր չէ, բայց ենթադրում էր, որ այդ ձեռնոցները հաղնում է միայն տէրութիւնը և ոչ թէ տէրութեան հազցնում էր եկեղեցին, որի գլուխը Յիսուս Քրիստոս է և որը առաջնորդւում է Ս. Հոգով։ Ձի կարելի չլիշել Մարթային ուղղած Քրիստոսի խօսքերը. «Մարթա, Մարթա, դու հոգաս և զբաղում իւր զբաղեալ ես. բայց աստ սակաւ ինչ պիտոյ է, Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ո՛չ բարձցի ի նմանէ»։

Իսկ «Нашъ Вѣкъ»ը ասում է. «Հասարակութիւնը արդէն վաղուց է, որ սպասում է եկեղեցական համագումար ժողովին, վաղուց սպասում է որ պրակտիկա եկեղեցու ամբողջ կազմը միանգամայն կբարեփոխուի. իսկ դորա փոխարէն բերողը աս հոգեւոր իշխանութիւնը իւր veto-ն է դնում նոյն իսկ քաղաքացիական ազատութեան ամենատարրական սկզբունքի՝ խղճի ազատութեան վերայ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հիսինային արեւմտեան Եւրոպայի Օսնաբրիւք քաղաքում անցեալ տարուայ սեպ. 23—25 տեղի է ունեցել ընդ. աւեստա-րանական բողոքական ընկերութեան տարեկան ժողովը։ Պրոֆ. Գրիւսէնդորֆ խօսել է այն մասին, թէ ի՞նչ ձևով պէտք է աւետարանը մատչելի դարձնել վայրենի ժողովուրդներին։ Դք. Ֆիստէր խօսելով ճապոնական զանազան կրօնների մասին՝ աշխատել է ապացուցանել, որ դրանք չեն դիմանայ ժամանակակից քաղաքակրթութեան պահանջներին. որից յետոյ ժողովի նախագահ դր. Քենդ ղեկուցել է, թէ քրիստոնէութիւնը ճապոնիայում լաւ արմատ է բռնում և որ պիտի աշխատել աւելի լաւ տարածման համար։ Ամենից վերջ խօսել է Դէօթին-կէնի՝ իւր ազատամտութեամբ աչքի ընկնող՝ պրոֆ. Բուրուէտ «Միսիոնի և կրօնների պատմութեան մասին»։

«Դուստաւ Ադոլֆ» ընկերութեան տարեկան ժողովը եկայում 1907 սեպտ. 16—17։

Այս ընկերութիւնը, որի նպատակն է ամեն տեղ ըողոքական համայնքներին օգնել, եկեղեցիներ, դպրոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ հիմնել, ծագել է 75 տարի

սրանից առաջ և գնալով աւելի զօրեղանում է: Ենայում հաւաքուածները թիւը շատ մեծ է եղել, նրանց բարի դալուստ են մաղթել կայսրը և սաքսոնական Գրոսհերցոգը, քաղաքագլուխը և ենայի համալսարանը ևն ևն:

Ընկերութեան նախագահը երկարօրէն դատախօսել է գիտութեան և հաւատի յարաբերութեան մասին: Նա այս առթիւ հետեւեալ դատողութիւններն է տուել. «Ասում են, որ գիտութիւնը հաւատի գերեզմանն է պատրաստում. մի՞թէ ճիշտ է: Քրիստոնէական հաւատը միշտ ընդգիմախօսութեան է հանդիպել, լայց այդ հակասութիւնը արմատացած է մարդու ներհակ ոյժերով լի ներքին աշխարհում. եթէ գիտութիւնը գոյութիւն էլ չունենար, էլի մարդու ներքին աշխարհը բաժանուած կլինէր: Կրօնի և գիտութեան մէջ եղած վէճը մի հակասութիւն է ըստ երևութին, որովհետեւ երկուսն էլ ուղում են ճշմարտութիւնը գտնել, բայց չեն կարող լինել երկու ճշմարտութիւններ, որոնք միմեանց հակասեն, այլ նոքա միմեանց պէտք է լրացնեն: Բանականութիւնը և առտուածային յայտնութիւնը ըղխում են միևնոյն առտուածային աղբիւրից և այն Առտուած, որ մեզ Յիսուսի շնորհիւ փրկել է, միևնոյն Առտուած տուել է մեզ բանականութիւն և զգայութիւններ: Գիտութիւնը, ազատօրէն և էքզակտ կերպով հետախուզում է երկիրը, բայց իւր քննութեան ոահմանից դուրս եղած խնդիրները մէջ չպէտք է խառնուի և չի կարող կոմպետենտ լինել: Գիտութիւնը պէտք է դիտականօրէն քննի. նա չպէտք է սուբեքտիւ հայեացքներով խճողուի և այդպիսով ոչ գիտական դառնայ: Դորա փոխարէն հաւատքը չպէտք է գիտութեանը միայն հետախուզելու իրաւունքը վերագրէ, իսկ վերջնական վճիռ տալու իրաւունքը, որին պիտի անպայման հնադանդուել, իրեն վերապահի: Նա թոյլ պիտի տայ գիտութեանն անել ինչ որ գիտական է, իսկ իրեն պահել ինչ որ զուտ հաւատքին է վերաբերում: Շարունակութեան մէջ նա ասում է. «Ենք չպիտի հետեւենք մի գիտութեան, որ համարձակուում է յարձակուել իրեն չստանալող սահմանների վրայ, սրը ենթադրութիւններից գիտական օրէնքներ, անլուծելի հարցերից թէօրեմաներ, ենթադրութիւնից սինթէզներ է առնում, մի խօսքով սեփական դոգմաներ կազմում, որոնք հաւատի դոգմաների ընաւորութիւն են կրում: Յարգանք գիտութեան. բայց եթէ կարծողներ կան, որ նա կարող է երբ և իցէ իսկական հաւատքը աւելորդ դարձնել կամ նորա տեղը բռնել, նրանք սխալւում են: Եթէ յոռետեսներ կան, որոնք

կարծում են, թէ արդէն քրիստոնէութեան մահը մօտեցել է, նրանց պիտի յիշեցնել Գէօթէի երկու խօսքերը. առաջինը հոգեւոր քաղաքակրթութիւնը յաւատարմութիւնով, թո՛ղ ընական գիտութիւնները աւելի և աւելի լայնանան, խորանան և մարդկային հոգին ընդարձակուի, որքան կամենայ, աւետարանում փայլող և ճանաչող քրիստոնէութեան ղեհութիւնից և բարոյական քաղաքակրթութիւնից նա դէնը չի անցնի»։ — Բ. — Բոլոր այն ժամանակները, երբ հաւատն է իշխել, փայլուն և ոգեւորող են եղել ժամանակակիցների և յետագաների համար, ընդհակառակն բոլոր այն ժամանակները, ուր անհաւատութիւնը մի որ և է պատճառով իւր խեղճ յաղթութիւնն է տարել, թէկուզ դրա բուհական փայլով ճառագայթած լինեն, յետագաների համար կորած են, որովհետեւ ոչ ոք սիրով չի ցանկայ անպտուղ բանի ծանօթութեամբ տանջուել»։

Այս գեղեցիկ դասախօսութիւնից յետոյ Դր. Հարտունկը տուել է վերջին 25 տարուայ հաշիւը, որից երևում է, որ այդ ընկերութիւնը օգնել է 2246 համայնքների և այդ նպատակով ծախսել է 1,694,629 մ.։

Նոր նուիրատուութիւններ ևս տեղի ունեցան հէնց ժողովի օրը։ Ենա քաղաքը նուիրեց ընկերութեանը 6000 մ., սաքսոնական հերցոգութեան դպրոցներից հաւաքուած է 1430 մ., Վայմարի պատտընները տուին 835 մ., 9000 մ. զանազան տեղերից, 10,000 մ. Թիւրինգիայից, այնպէս որ ընկերութիւնը այդ օրը միայն ստացաւ 27,700 մ.։ Հետևեալ օրը այդ նուէրների վրայ աւելացաւ 10,273 մ. ևս։

Ունիւստեցիական և քաղաքական ժողովը եւ կրօնական լիբերալների ազգամիջեան համաժողովը—1905 թ.-ին Ամերիկայի ունիւստեցիները որոշեցին իրենց 22-րդ ժողովը կրօնական ազատամիտների ազգամիջեան համաժողովի հետ միացնելու. երկու ժողովների տեղը ընտրուեցաւ Բոստոն։

Ունիւստեցիական համայնքները Ամերիկայում գնալով ծաղկում են։ Քալիֆոռնիայում նրանք հիմնել են մի առտուածաբանական դպրոց և 150,000-անոց մի ֆոնդ միսիոնի համար։ Այդ եկեղեցին ձգտում է միանալ արեւմտաւորական եկեղեցու հետ։

Ազգամիջեան համաժողովին մասնակցում էին 2000 հոգի, որոնք 16 տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ էին։ Գերմանիայից ներկայ են եղել պրոֆ. Ֆլայդերեր, Բադէ, Ֆիշեր։ Ժողովի նախագահը խօսել է այն մասին, որ մեր ժամանակում կրօնական լիբերալների թիւը շատ է մեծացել և այդպիսիք

գոյութիւն ունին ամէն եկեղեցու մէջ: Զանազան դասախօսութիւններէց երևաց, որ կրօնական ազատ մտածողութիւնը եւրոպական մայր ցամաքի վերայ դժուարութիւններէ է հանդիպում, որովհետեւ պետութիւնը, որը միշտ պահպանողական է, միջամտում է եկեղեցու գործերին. իսկ ընդհանրապէս Ամերիկայում գոյութիւն ունեցող եկեղեցու և պետութեան բաժանումը շատ է նպաստում կրօնական կեանքի անխափան ծաղկման: Մի բողոքական պրոֆ. Բեյլի, Փարիզեցի, իւր դասախօսութեան մէջ յայտնեց այն կարծիքը, թէ Ֆրանսիան չնայած իւր վերջին ճիգերին մնում է դարձեալ կաթոլիկ: Կաթոլիկութեան մէջ յայտնի իւր ազատամտութեամբ Աբբայ A. Houtin, Փարիզեցի, կարդաց «Կաթոլիկ եկեղեցու կրիզիսի մասին» և յայտնեց որ մեծ փոփոխութիւն են սպասում կաթոլիկ եկեղեցու մէջ:

Աւետարանական բնկերութեան բնդ. ժողովը Վուրմու:—Անցեալ տարի սեպ. 29—2 հոկ. տեղի ունեցաւ այդ ընկերութեան ժողովը, որի անդամների թիւը հասնում է 348160, նա իւր բերան թերթը հրատարակել է մի տարուայ մէջ 4,500000 օրինակ: Աւտարիայում կաթոլիկութիւնից բողոքական դարձած համայնքների վրայ ծախսել է 300000 մարք: Այս ընկերութիւնը աշխատում է Ռայսխտադում կեդրոնի քաղաքական ոյժը կոտրել և ուշտրամոնտանականութեան ծայրահեղ պահանջներին վերջ դնել:

Ներքին Միսիոնի 34-րդ ժողովը Եսսեմում:—Սեպտ. 23—26 3000 հոգու մասնակցութեամբ տեղի ունեցաւ այս ժողովը: Միևնոյն ժամանակ տեղի ունեցաւ այդ գործարանական քաղաքում աւետարանական աշխատաւորների միութեան 25 ամեայ յորելեանը: 20000 աշխատաւորներ հանդիսաւոր կերպով ցոյց էին արել փողոցներում, տպացուցանելու համար, որ բողոքական եկեղեցին կարողացել է աշխատաւոր դատակարգի համակրանքը և լստահութիւնը գրաւել: Անշուշտ քրիստոնեայ եկեղեցին ևս պէտք է աշխատի ողորակական անհաւատարութեան առաջն առնել: Լայպցիկից պահպանողական պրոֆ. Ihmels դասախօսել է «եկեղեցու և ներքին միսիոնի մասին»: «... եկեղեցու պարտքն է, ասել է նա, ժողովրդական կեանքի վերանորոգութեան մասին մտածել, ներքին միսիոնը նրան այս գործում պիտի օգնի»:

«Բուռն սէր դէպի շօշափելի իրականութիւնը և անհատական կեանքով ապրելու զօրեղ ձգտումը բնորոշում են մեր դարը: Այս երկու կէտերը ի նկատի առնելով եկեղեցին պիտի

աշխատի յարմարուել . . . : Նա պէտք է աշխատաւոր դասա-
կարգի համար գործի, պէտք է ջանայ, որ ընտանիքը չքայ-
քայուի»։ Դր. Քաթիթան դասախօսի մտքերը լրացրել է ասելով՝
որ ժամանակակից մարդկութիւնը զանազանում է հին դարի
մարդկութիւնից, մենք ուզում ենք մոզերն լինել . . . Միսիոնի
մէջ գործող մարդիկն էլ պէտք է մոզերն մտածողներ լինեն։
Ճառախօսողներից մի ուրիշը մասնացոյց անելով՝ որ Աֆրիկայի
գերման դաղութներում մօտ 13000 գերմանացիք են ապրում,
որոնց գործելակերպը պատիւ չի բերում քրիստոնէութեան,
պահանջեց, որ ներքին Միսիոնը իւր գործունէութիւնը նաև այդ
մարդկանց վրայ տարածի և նրանց սովորեցնի քրիստոնաւայել
կեանքով ապրել։

Վերջերս Դերմանիայում տեղի են ունեցել ուրիշ բազմա-
թիւ ժողովներ, որոնց բոլորի նպատակն է, աւետարանի ոգւով
եկեղեցին ղօրեղ և կենսունակ դարձնել. իսկ ի՞նչ է կատար-
ւում մեր եկեղեցում։

